ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» սեպտեմբերի 2024 թվականի N 1196-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Խաչիկ Օսմանի Մարտիրոսյանի (ծնված՝ 1975 թվականի հունվարի 6-ին) և Արսեն Վահագնի Պողոսյանի (ծնված՝ 1978 թվականի ապրիլի 11-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր-1 այգետարածքի 30-րդ թաղամասի թիվ 64 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2306857 վկայական, տրված 2006 թվականի նոյեմբերի 27-ին, «ԿԱԴԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի օգոստոսի 15-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024TXHM7F, մուտքագրված 2024 թվականի օգոստոսի 19-ին:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԿԱԴԻՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Խաչիկ Օսմանի Մարտիրոսյանին և Արսեն Վահագնի Պողոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր-1 այգետարածքի 30-րդ թաղամասի թիվ 64 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2007 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 227,66 քառ.մետր և թիվ 3 պարիսպը՝ 5,76 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Անի Վասիլի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր-1 այգետարածքի 30-րդ թաղամասի թիվ 64 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Խաչիկ Օսմանի Մարտիրոսյանին և Արսեն Վահագնի Պողոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Ձորաղբյուր-1 այգետարածքի 30-րդ թաղամասի թիվ 64 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 95-րդ թաղամաս, թիվ 18:

2.Խաչիկ Օսմանի Մարտիրոսյանին և Արսեն Վահագնի Պողոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Չորաղբյուր գյուղի 95-րդ թաղամասի թիվ 18 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2007 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 227,66 քառ.մետր և թիվ 3 պարիսպը՝ 5,76 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 455 068 (չորս հարյուր հիսունհինգ հազար վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Խաչիկ Օսմանի Մարտիրոսյանին և Արսեն Վահագնի Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. սեպտեմբերի 13

գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«13» սեպտեմբերի 2024 թվականի N 1195-Ա

## ՆԱՐԻՆԵ ԱՄՈՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 տան բնակիչ Նարինե Ամոյի Մուրադյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը ներկայումս բաղկացած է 7 անձից,Նարինե Ամոյի Մուրադյանը և ամուսինը՝ Հուսիկ Գոգոյի Ասոյանը, ամուսնու ծնողները՝ Գոգո Ասոյանը և Խազալ Ռզգոյանը, չեն աշխատում, ինչպես նաև որպես եզդի ազգաբնակչության ներկայացուցիչներ չեն զբաղվում անասնապահությամբ, Գոգո Ասոյանը հանդիսանում է կենսաթոշակառու, նրանց խնամքի տակ են 3 անչափահաս երեխաները՝ Նուբար, Գյոզալ և Կնյազ Հուսիկի Ասոյանները, ծնված՝ 2007, 2009, 2012 թվականներին, ընդ որում Գյոզալ Ասոյանը ունի տեսողության խնդիր և գտնվում է երկարատև բուժման մեջ, ընտանիքի եկամուտը չի բավականացնում ընտանիքի կարիքները հոգալու համար և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Նարինե Ամոյի Մուրադյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հավհաննիսյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Նարինե Ամոյի Մուրադյանի ընտանիքին ցույց տալ ֆինանսական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարինե Ամոյի Մուրադյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. սեպտեմբերի 13
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» սեպտեմբերի 2024 թվականի N 1194-Ա

## ԱՐԹՈՒՐ ՌԱԶՄԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի թիվ 78 տան բնակիչ Արթուր Ռազմիկի Պողոսյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը ներկայումս բաղկացած է հինգ անձից, կինը՝ Մելինե Մանասերի Ելինյանը ունի առողջական խնդիրներ, պետք է վիրահատվի, նրանց խնամքի տակ են երեք անչափահաս երեխաները՝ Արմեն, Սարգիս և Տիգրան Արթուրի Պողոսյանները, ծնված՝ 2008, 2010 և 2018 թվականներին և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ՝ Սոնա Հովհաննիսյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Արթուր Ռազմիկի Պողոսյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արթուր Ռազմիկի Պողոսյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԴՐՈՍՅԱՆ

2024 թ. սեպտեմբերի 13
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«13» սեպտեմբերի 2024 թվականի N 1193-Ա

## ՄԻՇԱ ԱՐԱՐԱՏԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼ

***Ջրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.***

Քաղաքացի Միշա Արարատի Մկրտչյանը՝ հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, Հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ հարկերը վճարելու պարտավորությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի նոյեմբերի 27-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով և 34-րդ հոդվածով Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել էր վարչական վարույթ՝ փոխադրամիջոցի գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

***Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.***

Համաձայն աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 12-ին տրված N 143779505630125153 և փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքների՝ Միշա Մկրտչյանը Ջրվեժ համայնքի բյուջեի հանդեպ մարել է Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղում հաշվառված OPEL CALIBRA 2.0 I մակնիշի 35VT536 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի 2014-2022 թվականների հարկային պարտավորությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Միշա Արարատի Մկրտչյանի նկատմամբ 2023 թվականի նոյեմբերի 27-ին հարուցված վարչական վարույթը կարճել:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջրվեժ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Պետրոսյանը:

4.Որոշման մեկ օրինակը եռօրյա ժամկետում հանձնել Միշա Արարատի Մկրտչյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. սեպտեմբերի 13
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» սեպտեմբերի 2024 թվականի N 1192-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 487-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2018 թվականի նոյեմբերի 29-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու, համայնքի ղեկավարի 2012 թվականի մարտի 14-ի թիվ 26-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 487-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման առաջին կետում «Սանթրոսյան Նորայր» բառերը փոխարինել «Մկրտչյան Արմեն» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. սեպտեմբերի 13
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» սեպտեմբերի 2024 թվականի N 1191-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի ԹԻՎ 104-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 4-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի գործողությունների պլանը հաստատելու մասին» թիվ 104-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշմամբ հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. սեպտեմբերի 13
գ. Ջրվեժ

«Հավելված»
Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2024 թվականի
սեպտեմբերի 13-ի N 1191-Ա որոշման

«Հավելված»
Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2019 թվականի
մարտի 4-ի N 104 -Ա որոշման

# Պ Լ Ա Ն
# ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### 1.1. ՊԼԱՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1. Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի գործողությունների պլանը (այսուհետ՝ Պլան) սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ համայնքապետարանի, կազմակերպությունների և փրկարար ուժերի խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը:

### 1.2. ՊԼԱՆՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2. Պլանում ներգրավվում են՝
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանը
2) Ջրվեժ համայնքի տարահանման հանձնաժողովը:

### 1.3. ՊԼԱՆՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ պլանում ներգրավված մարմինների գործառույթներն են՝

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի գործառույթներն են՝

ա.ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ.միջոցառումների իրականացումը՝ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով,

գ.համայնքի բնակչության, գյուղատնտեսական կենդանիների, նյութական և մշակութային արժեքների, գյուղատնտեսական կենդանիների ու ապրանքների տարահանման, բնակչության՝ ժամանակավոր կացարաններով և առաջին անհրաժեշտության միջոցներով ապահովումը,

դ.համայնքի բնակչության ազդարարումը,

ե.համայնքի ուժերի՝ փրկարարական աշխատանքներին մասնակցության ապահովումը,

զ.մահացածների հուղարկավորության իրականացումը,

է.բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

2) Ջրվեժ համայնքի տարահանման հանձնաժողովի գործառույթներն են՝

ա.ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ.տուժած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով ապահովման կազմակերպումը,

գ.տարահանված բնակչության ընդունման հավաքակետերի և տեղաբաշխման վայրերի ծավալման նախապատրաստման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը,

դ.տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

ե.տարահանված բնակչությանը տեղաբաշխելու համար նախատեսված տրասնպորտային միջոցների հատկացման աշխատանքների կազմակերպումը,

զ.բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

## II. ՊԼԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

4.Պլանի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները և այլ իրավական ակտեր՝

1)«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքը,

2) «Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենքը,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշումը,

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին» N 1925-Ն որոշումը,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման կարգը սահմանելու մասին» N 1494-Ն որոշումը,

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» N 1064-Ն որոշումը (Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1471-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն),

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշումը,

8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N 919-Ն որոշումը:

## III. ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

### 3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5.Ջրվեժ համայնքի տարածքում են գտնվում Ջրվեժ, Ձորաղբյուր և Ձովք բնակավայրերը: Համայնքը գտնվում է Կոտայքի մարզում, ծովի մակերևույթից 1415-1670 մ բարձրության վրա, մարզկենտրոնից 45 կմ դեպի հարավ-արևմուտք: Բնակչությունը զբաղվում է հիմնականում մանրածախ առևտրով, արտագնա աշխատանքով, մասամբ՝ այգեգործությամբ և անասնապահությամբ: Համայնքի աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ, մեղմ ձմեռով, համեմատաբար չոր եղանակով: Համայնքի բնակչության ընդհանուր թիվը կազմում է 12 288 մարդ, որից՝ 6172 արական սեռի, 6116՝ իգական: Ըստ տարիքի՝ մինչև 1 տարեկան 74, 1-3 տարեկան՝ 501, 4-6 տարեկան՝ 389, 7-17 տարեկան՝ 1537, 18-64 տարեկան՝ 7880, 64-ից բարձր՝ 1907:

Բնակելի տների ընդանուր քանակը 3914:

Համայնքի էներգամատակարարման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 110 կմ:

Համայնքում ջրամատակարարումն իրականացվում է ինքնահոս աղբյուրից միասնական համակարգով, ինչպես նաև պոմպակայանի միջոցով:

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է՝ խոշոր եղջերավոր անասուններ՝ 1362 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 13 գլուխ, ձիեր՝ 78, խոզեր՝ 407, մեղվաընտանիքներ՝ 1070, թռչուններ՝ 2526 թև:

6.Համայնքը տարածքով սահմանակից է Երևան քաղաքին (սահմանի երկարությունը 16,792 կմ), Ողջաբերդ համայնքին (սահմանի երկարությունը 4,8 կմ):

Համայնքի պետական սեփականություն հանդիսացող և համայնքային ենթակայության ընդհանուր օգտագործման ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 85,3 կմ, որից 10,8 կմ միջպետական և հանրապետական նշանակության է, 1,1 կմ մարզային, 52,5 կմ համայնքային նշանակության:

Համայնքի տարածքում առկա է մեկ կամուրջ՝ Երևան-Գառնի մայրուղու 2-րդ կմ:

Տարածքում առկա է 2 հատ տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող 1 հատ

կազմակերպություն: 2 կազմակերպություններ ռազմական դրության պայմաններում ամբողջությամբ կամ մասամբ շարունակում են գործունեությունը:

Համայնքում կա ԳԳՄ գազի միավորման ընդհանուր 56 կմ բարձր, ցածր և միջին ճնշման խողովակաշարեր: Էներգամատակարարման 51 կմ վերգետնյա գիծ և 43,4 կմ ջրատար խողովակաշար:

7. Համառոտ բնութագիրը ըստ բնակավայրերի՝

1) Ջրվեժ համայնքի Ջրվեժ բնակավայրի՝

ա.բնակչության թիվը կազմում է 8726 մարդ, որից՝ 4069 արական սեռի, 4057 իգական: Ըստ տարիքի՝ մինչև 0-3 տարեկան 382, 4-6 տարեկան՝ 267, 6-18 տարեկան՝ 1030, 19-65 տարեկան՝ 5150, 65-ից բարձր՝ 1297,

բ.բնակելի տների քանակը՝ 1643 առանձնատներ,

գ.տարածքում գործում են թվով 82 կազմակերպություններ, որոնցից՝ հասարակական սննդի օբյեկտներ՝ 27, մեկ հանրակրթական դպրոց՝ 1231 աշակերտով, Ջրվեժի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցը, «Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մսուր-մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ն, «Ջրվեժի բժշկական ամբուլատորիա» ՊՓԲԸ-ն, «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» ԱԿՈՒՀ ՀՈԱԿ-ը, «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ը և «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը,

դ.ջրամատակարարումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից՝ կենտրոնացված կարգով,

ե.էներգամատակարարման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 100 կմ,

զ.գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը հետևյալն է՝ խոշոր եղջերավոր անասուններ՝ 86 գլուխ, մանր եղջերավոր՝ 3320, խոզեր՝ 60, մեղվաընտանիքներ՝ 230, թռչուններ՝ 214 թև:

2) Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր բնակավայրի՝

ա.բնակչության թիվը կազմում է 3093 մարդ, որից 1555 արական սեռի, 1538 իգական: Ըստ տարիքի՝ մինչև 0-3 տարեկան 138, 4-6 տարեկան՝ 80, 6-18 տարեկան՝ 440, 19-65 տարեկան՝ 2044, 65-ից բարձր՝ 391,

բ.բնակելի տների ընդհանուր քանակը՝ 1231 առանձնատներ,

գ.տարածքում է գտնվում համայնքապետարանի վարչական շենքը, «Ձորաղբյուրի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ը, միջնակարգ դպրոցը,

դ.ջրամատակարարումն իրականացվում է պոմպակայանի միջոցով,

ե.էներգամատակարարման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 7 կմ,

զ.գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է՝ խոշոր եղջերավոր անասուններ՝ 659 գլուխ, խոզեր՝ 158, ձիեր՝ 65, մեղվաընտանիքներ 420, թռչուններ՝ 1161 թև:

3) Ջրվեժ համայնքի Ձովք բնակավայրի՝

ա.բնակչության թիվը կազմում է 1068 մարդ, որից 548 արական սեռի, 520 իգական: Ըստ տարիքի՝ մինչև 0-3 տարեկան 55, 4-6 տարեկան՝ 42, 6-18 տարեկան՝ 151, 19-65 տարեկան՝ 709, 65-ից բարձր՝ 111,

բ.բնակելի տների ընդանուր քանակը 207, բազմաբնակարան շենք 3,

գ.տարածքում է գտնվում համայնքապետարանի վարչական շենքը, միջնակարգ դպրոցը, նորակառույց հանդիսությունների սրահը, «Ջրվեժ համայնքի Ձովք գյուղի մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ը,

դ.ջրամատակարարումն իրականացվում է ինքնահոս՝ աղբյուրից միասնական համակարգով,

ե.էներգամատակարարման գծերի ընդհանուր երկարությունը կազմում է 3 կմ,

զ.գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը կազմում է՝ խոշոր եղջերավոր անասուններ՝ 631 գլուխ, մանր եղջերավոր՝ 63 գլուխ, խոզեր՝ 481, ձիեր՝ 9, մեղվաընտանիքներ՝ 420, թռչուններ՝ 1151 թև:

## IV. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

8. Հնարավոր իրադրության բնութագիրը՝

1) համաձայն լիազոր մարմնի տվյալների՝ մարզում երկրաշարժի առավել հավանական էպիկենտրոններ են համարվում՝

ա. Գառնի՝ $\lambda$ =440 80′, $\varphi$ =40010′, *M*=7.0, *H*=15 կմ (10-11 բալ),

բ. Ջանգեզուր՝ $\lambda$ =460 00′, $\varphi$ =39020′, *M*=6.3, *H*=22 կմ (8-9 բալ),

գ. Սպիտակ՝ $\lambda$ =440 23′, $\varphi$ =40092′, *M*=7.1, *H*=15 կմ (9-10 բալ),

դ. Փարաքար՝ $\lambda$ =440 43′, $\varphi$ =40013′, *M*=5.0, *H*=10 կմ (7 բալ).

2) հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր էպիկենտրոններից առավել մեծ վնաս կհասցվի Գառնիի երկրաշարժի դեպքում (10-11 բալ), սույն պլանում հնարավոր իրադրության գնահատականը տրված է ըստ այդ տվյալների:

3)ուժեղ երկրաշարժի դեպքում Ջրվեժ համայնքի վարչական տարածքում երկրաշարժի ուժգնությունը կարող է հասնել 9-10 բալի, որի հետևանքով համայնքում հնարավոր է բնակելի շենքերի, առանձնատների, կառույցների ու շինությունների հիմնական մասի լրիվ կամ մասնակի ավերում՝

ա.Զրվեժ բնակավայրի տարածքում 9 բալ ուժգնության երկրաշարժի դեպքում համայնքի բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն 1072 մարդ, որից անվերադարձ՝ 616 մարդ, սանիտարական՝ 456, անօթևան բնակչության թիվը կկազմի՝ 4900 մարդ,

բ.Ձորաղբյուր բնակավայրի տարածքում 9 բալ ուժգնության երկրաշարժի դեպքում բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն 430 մարդ, որից՝ անվերադարձ –248 մարդ, սանիտարական – 182, անօթևան բնակչության թիվը կկազմի - 1500 մարդ,

գ.Զովք բնակավայրի տարածքում 10 բալ ուժգնության երկրաշարժի դեպքում համայնքի բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն 234 մարդ, որից՝ անվերադարձ–134 մարդ, սանիտարական–100, անօթևան բնակչության թիվը կկազմի-650 մարդ:

## V. ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Համայնքի տարածքում՝ բնակելի թաղամասերին կից գտնվող ազատ տարածությունում ստեղծվում են 3 վրանային ճամբարներ, որտեղ տեղաբաշխվում են 7050 մարդ:

### 5.1. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

10.Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների անցկացման վերաբերյալ որոշման ընդունման, ուժերի նախապատրաստման և կիրառման կարգը հետևյալն է՝

1)երկրաշարժի գոտու հետախուզական տվյալները հավաքվում և վերլուծվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության աշխատանքային խմբում՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի վարչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ.

2) վերլուծության արդյունքում որոշվում են՝

ա. երկրաշարժի հետևանքների ծավալները,

բ.փրկարարական աշխատանքների բնույթը, ծավալը և անցկացման հաջորդականությունը,

գ.ուժեղ ներգործող թունավոր նյութեր օգտագործող կազմակերպությունների (օբյեկտների) վթարի բնույթը, ծավալները, ինչպես նաև թունավոր նյութերի հնարավոր ազդեցությունը փրկարարական ուժերի գործողությունների վրա,

դ.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի փրկարարական ուժերի կազմը, վիճակն ու փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և այդ նպատակով այլ չտուժված համայնքների, մարզերի վթարավերականգնողական ուժերի ու բնակչության ներգրավման անհրաժեշտությունը

ե.միջազգային օգնության կարգով հատկացվող ուժերի ու միջոցների օգտագործման անհրաժեշտությունը, քանակը և ներգրավման վայրը,

զ.տեղանքի բնույթը, ճանապարհների վիճակը, տարվա օրվա ժամանակն ու եղանակը և այդ գործոնների ազդեցությունն ուժերի գործողությունների վրա,

է.աղետի գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները,

ը. աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունն ապահովող միջոցները.

3)ելնելով իրադրության գնահատման եզրակացություններից՝ մարզային ԱԻ հանձնաժողովի նախագահն ընդունում է որոշում աղետի գոտում որոնողափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման վերաբերյալ, ըստ որի աղետի գոտու համար նշվում են՝

ա. երկրաշարժի տարածքը և հետևանքները,

բ.փրկարարական աշխատանքների իրականացման համար ներգրավվող ուժերն ու միջոցները և նրանց խնդիրները,

գ.աշխատանքների կատարման անվտանգության միջոցառումները,

դ.աղետի գոտու տուժածների և բնակչության տարահանման երթուղիները,

ե.ներգրավված ուժերի համագործակցության կարգը և գործողություններն ապահովող միջոցառումները,

զ.պահեստային ուժերի և միջոցների կազմն ու տեղաբաշխումը,

է.փրկարարական աշխատանքների համակողմանի ապահովման կարգը,

ը.կառավարման կազմակերպման կարգը.

4)երկրաշարժի հետևանքների վերացման մարզային հանձնաժողովի նախագահը փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կառավարման մարմինների և փրկարարական ուժերի ղեկավարներին տալիս է առաջադրանքներ՝ անձամբ կամ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության միջոցով:

## 5.2.ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11.Մարզի փրկարարական, վթարավերականգնողական, հասարակական փրկարարական խմբերի և բնակչության բազայի հիման վրա կազմվում է ուժերի խմբավորում, որը նախատեսված է փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելու համար: Աղետի գոտում փրկարարական աշխատանքներ իրականացնող ուժերն ու միջոցները կազմված են՝

1)առաջին էշելոնից, որը նախատեսված է իրավիճակը բացահայտելու, գնահատելու, փրկարարական աշխատանքներ սկսելու և հետագայում ժամանող ուժերի ներգրավումն ապահովելու համար: Ընդգրկում են՝

ա.Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումների 2/3-ը (մնացած ուժերը մնում են հիմնական տեղակայման վայրերում՝ ամենօրյա խնդիրների լուծման համար),

բ.այլ մարզերի ուժերը.

2)երկրորդ էշելոնից, որը նախատեսված է փրկարարական աշխատանքների ծավալը կտրուկ ընդլայնելու համար: Ընդգրկում է մարզի առաջին կանչի ուժերը և վթարավերականգնողական խմբերը.

3)երրորդ էշելոնից կամ պահուստից, որը նախատեսված է անսպասելի ծագող խնդիրների լուծման համար: Ընդգրկում է երկրորդ էշելոնում չընդգրկված մարզային և համայնքային ուժերը, հասարակական փրկարարական խմբերը և ներգրավված բնակչությանը: Փրկարարական աշխատանքների իրականացման նպատակով ուժերի և միջոցների ստեղծման ժամանակ պահպանվում են նրանց չմասնատելու սկզբունքները՝ գլխավոր խնդրի իրականացման համար, հաշվի առնելով բնակավայրերի ավերվածության աստիճանը և նրանցում բնակչության թիվը (խտությունը): Ուժերի տեղակայման վայր ընտրելիս՝ հաշվի են առնվում հիգիենիկ- համաճարակային իրավիճակը, գերակշռող քամիների ուղղությունը, ճանապարհների առկայությունը երկրաշարժից ավերված գոտիներում (հատվածներում), փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելիս՝ ուժերի և միջոցների կենտրոնացված ղեկավարությունն իրագործելու հնարավորությունները, նյութատեխնիկական ապահովումը, ուժերի և միջոցների ուղարկումն առաջին հերթին խիտ բնակեցված հատվածներ՝ փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար:

12.Աշխատանքային տեղամասերի ղեկավարները մինչև փրկարարական աշխատանքների սկիզբը կազմակերպում են տվյալ աշխատանքային տեղամասում գործող ուժերի համագործակցությունը՝

1) որոշում են աշխատանքների կատարման կարգը և հաջորդականությունը՝ ըստ կատարման ժամանակի.

2) որոշում են ինժեներական տեխնիկայի օգտագործման կարգը՝ աշխատատար աշխատանքներն իրականացնելու ընթացքում.

3) համաձայնեցնում են ըստ կատարման տեղի և ժամանակի ներգրավված ուժերի գործողությունները.

4) որոշում են կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրամանատարների միջև.

5) հայտ են ներկայացնում արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողով՝ լրացուցիչ ուժեր հատկացնելու համար: Փրկարարական աշխատանքների կատարման ընթացքում ճշտում և անընդհատ զբաղվում են համագործակցության հարցերով.

6) տեխնիկայի մուտքը երկրաշարժի գոտի նախատեսվում է՝

ա.առաջինը՝ թրթուրավոր տեխնիկայի մուտքը,

բ.այնուհետև՝ անվավոր մեքենաների մուտքը.

7) դեպի աշխատանքային տեղամասեր փրկարարական ուժերի մուտքն ապահովելու համար նախատեսվում են փրկարարական ուժերի առաջշարժումը (մուտքն աղետի գոտի) ապահովող խումբ և սանիտարական դրուժինաներ.

8)որպես առանձին միջոցառում՝ փրկարարական ուժերի մուտքի ապահովումը հակահրդեհային ապահովումն է, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների ուժերով և ներառում է հրդեհների տեղայնացումն ու մարումը, ապահովվում են վառվող, ծխապատ և գազերով լցված շինություններից մարդկանց փրկումը և տեղափոխումն անվտանգ վայրեր.

9)փրկարարական ուժերի երկրաշարժի գոտում փրկարարական աշխատանքների տեղամասեր ժամանումից հետո աշխատանքների տեղամասերի ղեկավարները միջոցներ են ձեռնարկում փլուզված և այրվող շենքերից ու շինություններից մարդկանց փրկելու, առաջին օգնություն ցուցաբերելու և դաշտային կամ ստացիոնար բուժհիմնարկներ տեղափոխելու համար.

10)տուժածներին հայտնաբերելու նպատակով՝ փրկարարական կազմավորումների ղեկավարներն

աշխատանքային տեղամասեր են ուղարկում որոնման խմբեր, որոնք մանրակրկիտ զննում են փլուզված շենքերը և կառույցները: Տուժածների տեղերը հայտնաբերելու գործընթացում անհրաժեշտ է օգտագործել տեղի բնակչության կողմից ստացված տեղեկատվությունը և բնակչության ուժերն օգտագործել տուժածներին փլատակների տակից դուրս բերելու համար, քանի որ այդ ժամանակ մեծանում է ձեռքի աշխատանքների ծավալը:

## VI. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ, ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

13.Բնակչության կենսաապահովման, տուժածներին օգնություն ցուցաբերելու, փրկարարական աշխատանքների կազմակերպման համար և այդ նպատակով պարենային, բժշկական ու նյութական պաշարների նպատակային օգտագործման կարգն է՝

1)երկրաշարժի ժամանակ լուծվում են բնակչության կենսաապահովման հիմնական խնդիրները՝ բնակչության կյանքին, առողջությանը, աշխատունակությանը և ֆիզիոլոգիական պահանջների ապահովմանն ու պահպանմանը վերաբերող: Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսավորումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Այդ նպատակներին ծառայում են նաև առկա և ստեղծվող (ստացվող) նյութական պաշարները ու այլ մարզերի, համայնքների, կազմակերպությունների ու մարդասիրական օգնության միջոցները.

2)արտակարգ իրավիճակների համար անհրաժեշտ նյութական պաշարների ու միջոցների ցանկը և ծավալները որոշում են ըստ չափաքանակների՝ տուժած բնակչության թվի հիման վրա և արտակարգ իրավիճակների դասակարգմանը համապատասխան.

3)նյութական պաշարները և միջոցները պետք է օգտագործվեն առաջնահերթ հետևյալ միջոցառումների իրականացման համար վթարափրկարարական, մարդկանց կյանքի և առողջության անմիջական վտանգի վերացման աշխատանքների, տուժած բնակչության համար ժամանակավոր կացարանների ու սննդի կետերի ծավալման և դրանց գործունեության ապահովման, միանվագ նյութական օգնության ցուցաբերման և այլն.

4)տուժած բնակչության սոցիալական և կենսաապահովման, այդ թվում՝ անօթևան մնացած բնակչությանը ժամանակավոր կացարաններով ապահովման կազմակերպիչն ու պատասխանատուն պետական կառավարման տարածքային մարմինն է, որը համագործակցում է համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների հետ.

